



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

52-րդ ՏԱՐԻ, ԱՄՍՐԱԼԻԱ  
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2021



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»  
երկամսյա հոգեուր թերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Աղօթեցէք Հայաստանի համար.

- 44 օրեայ պատերազմին շատ կեանքեր զոհուեցան եւ շատ վիրաւորներ ունեցանք, ոմանք գերի ընկան, երկիրը խորը հոգեւոր ցաւի ու ցընցումներու մէջ է: Աղօթեցէք, որ Աստուած բժշկէ ու խաղաղութիւն հաստատէ:
- Աղօթեցէք փախստականներու համար, ովքեր կորսնցուցին իրենց հողն ու ունեցուածքը:
- Աղօթեցէք համաճարակի համար: Վարակուողներու թիւը հետզհետէ կը շատնայ, եւ կառավարութիւնը կ'ուզէ նոր կանոնակարգեր մտցնել:
- Աղօթեցէք աղքատներու եւ հիւանդներու համար: Անոնց թիւը վերջին 20 տարիներու ընթացքին չի նուազած: Մենք այսպիսի դաժան պայմաններ չենք տեսած, երբ աղքատը կերակուրի համար կուլայ:

### Բովանդակութիւն

Զօրացիր, քաջասիրտ եղիր. . . . . 3  
*Հովիւ Հրաչ Գույունեան*

Մէկ մարդու պէս ժողովիլ . . . . . 4  
*Գանիլ Եւյն*

Սաղմոսներու եռաբանութիւն . . . . . 8  
*Տոն Սրորմըր*

Արագ ըլլալ լսելու մէջ  
եւ ծանր՝ խօսելու մէջ. . . . . 11  
*Նէյլ Պուրման*

Եղիայի աղօթքները . . . . . 13  
*Ռէքս Տիրլալ*

Վասն զի իմ լուծս քաղցր է  
եւ իմ բեռս թեթեւ . . . . . 15  
*ԱՄՄ*

Կազմի նկարը՝ Հայոց ցեղասպանութեան  
յուշահամալիր, Օգոստոս 2007թ.:

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## Ջօրացի՛ր, քաջասի՛րտ եղի՛ր

Շատ յաճախ կը լսենք մարդկանց մասին, ովքեր կը վախնան՝ չիմանալով ինչ որոշում կայացնել կամ ուր երթալ: Ոմանք չեն ուզեր նորութիւնները դիտել, քանի որ ոչ մէկ լաւ բան չեն լսեր, եւ ամէն օր ատելի վատ կ'ըլլայ, քան նախորդ օրը:

Մովսէսը 40 տարի քալեց անապատին մէջ՝ փորձելով մարդկանց սորվեցնել լսել ու հնազանդիլ Աստուծոյ: Իր մահէն ետք Յեսուն դարձաւ Իսրայէլի առաջնորդը: Աստուած իրեն ըսած էր, որ պէտք է դառնար իսրայէլացիներու նոր առաջնորդը:

Բոլոր խոստումները, որոնք Աստուած նախապէս տուած էր Մովսէսին փոխանցուեցան Յեսուին: Լաւ կ'ըլլայ Յեսուի գիրքը սկիզբէն կարդալ:

«Ահա քեզի կը պատուիրեն, զօրացի՛ր ու քաջասի՛րտ եղի՛ր, մի՛ վախնար ու մի՛ գարհուրիր. քանզի քու Տէր Աստուածդ քեզի հետ պիտի ըլլայ, ուր որ երթաս» (Յես. 1:9):

Ինչպիսի՛ քաջալերանք է այս համարը, բայց ուշադիր կարդացէք 8-րդ համարը.

«Այս օրէնքներու գիրքը քու բերնէդ թող չզատուի, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածէ, որպէս զի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յառաջ պիտի տանիս եւ այն ատեն յաջողութիւն պիտի գտնես» (Յես. 1:8):

Տէրը նոյն կերպով կը քաջալերէ մեզ այսօր: Մենք պէտք է կարդանք Աստուածաշունչը, խորհրդածենք Իր խօսքերու շուրջ ու հետեւինք Տէր Յիսուսին: Սա է յաղթանակի միակ ճանապարհը: Երբ կը հետեւինք Տէր Յիսուսին՝ վախը կ'անհետանայ: Երբ կը հետեւինք Իրեն՝ կը լեցուինք Սուրբ Հոգիի գորութեամբ:

Յեսուն գիտէր, որ չէր կրնար ժողովուրդին առաջնորդել, եթէ Տէրը իր հետ չ'ըլլար: Այսօր ալ այդպէս է: Մենք նոյնպէս կրնանք ըսել՝ եթէ Տէրը մեզի հետ չ'ըլլայ, մենք չենք կրնար յաղթողներ ըլլալ:

Հայեացքդ ուղղէ՛ դէպի Յիսուսը,  
Լիովին նայէ՛ Անոր հիանալի դէմքին,  
Եւ աշխարհային բաները անմիջապէս կ'անհետանան,  
Անոր փառքի ու շնորհքի լոյսի ներքոյ:

Արդեօք պատրաստ էք ձեր հայեացքը Իրեն ուղղելու: Արդեօք պատրաստ էք Իր դէմքը փնտռելու: Արդեօք պատրաստ էք Իր խօսքերուն շուրջ խորհրդածելու:

Խոստումը ձերն է. «Ձօրացի՛ր ու քաջասի՛րտ եղի՛ր, մի՛ վախնար ու մի՛ զարհուրի՛ր. քանզի քու Տէր Աստուածդ քեզի հետ պիտի ըլլայ, ուր որ երթաս»:

Հ. Գ.

## **Մէկ մարդու պէս ժողովի**

Կարդացէ՛ք Նեեմեայ 8:1-10-ը:

2020 թուականը ինծի համար շատ նշանակալից տարի էր: Տաս տարի առաջ առաջին անգամ ոտք դրի Հայաստան: Այդ ժամանակէն ի վեր մի քանի անգամ այցելած եմ Հայաստան: Մեր այցելութիւնները կը ներառէին նաեւ Արցախի տարածքը, որը վերջին տասը տարիներու ընթացքին մի քանի առիթներով եղած է մեր հիմնական ուղղութիւնը:

Դժբախտաբար, անցեալ տարուայ սեպտեմբերի վերջը Արցախի եւ հարեւան Ազրայէճանի միջեւ քաղաքական լարուած իրավիճակը վերածեց լիակատար պատերազմի: Մենք կը ծրագրէինք Արցախ այցելել մեր միսիոնարական առաքելութեան ժամանակ: Մենք բոլորս տեղեակ ենք, թէ ինչպէս COVID-19-ը ազդած է ամբողջ աշխարհի վրայ: Այս ամէնուն մէջ Տէրն Իր շնորհքով հնարաւորութիւն տուաւ մեզի շարունակելու հաղորդակցուիլ ու աղօթել Քրիստոսով մեր սիրելիներու հետ՝ համացանցի տարբեր հարթակներու միջոցով:

Նեեմեան կը ողբար իր երկրի ու ժողովուրդի համար: Ան առաջնորդուեցաւ վերադառնալու Երուսաղէմ ու կառուցելու անոր փլած պա-

րիսպները: Տէրն իսկապէս տուաւ իրեն իր սրտի փափաքը: Տէրը ամենակիզբէն Նեէմեայի հետ էր, նոյնիսկ երբ հեթանոս թագաւորին պատասխանեց աստուածատուր պատասխանը:

Կարդացէ՛ք Նեէմեայ 2:4-5-ը:

Չնայած Նեէմեան յաջողակ էր պարիսպը կառուցելու մէջ, սակայն իր վերադարձի բուն նպատակը մարդկանց սրտերը դէպի իրենց Աստուածը դարձնելն էր: Սուրբգրային այս հատուածին մէջ պարիսպի կառուցումն ասարտուած էր, բայց Աստուծոյ ժողովուրդի կառուցումը տակաւին ընթացքի մէջ էր, ուստի ամբողջ ժողովուրդը մէկ մարդու պէս ժողուեցաւ:

## Մէկ մարդու պէս

Կարդացէ՛ք Նեէմեայ 8:1-ը:

Նեէմեայ կը նշանակէ «Եհովան կը սփոփէ»։ շատ տեղին ու ժամանակին ըսուած յիշեցում, քանի որ բոլորս Եհովայի մխիթարութեան կարիքն ունինք: Շեշտը դրուած է միասնութեան վրայ: Տիրոջ ցանկութիւնն Իր ժողովուրդի հանդէպ յստակ է:

Եփես. 4:3-6-ը կը սորվեցնէ, թէ Տիրոջ մահէն, յարութիւն առնելէն եւ Հօր մօտ վերադառնալէն ետք, ժողովուրդը մեծ ակնկալիքով կը սպասէր Իր խոստմանը: Անոնք այդ ըրին՝ միաւորելով իրենց սրտերը առօրքի մէջ:

Գործք 1:14-ի մէջ կը կարդանք. «Ասոնք ամէնքը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին...»: Որպէս «մէկ մարդ» ժողովիլը շարունակուեցաւ Հոգեգալուստէն ետք:

Գործք 2:46-47-ը կ'ըսէ, թէ աշակերտները «ամէն օր միաբանութեամբ տաճարը երթալու ետեւէ էին»: Միաբանութեամբ հաւաքուիլը կ'ենթադրէ մտքի ու սրտի մէկութիւն: Այս բառը, որին յաճախ կը հանդիպինք Գործք Առաքելոց գրքին մէջ յստակ յիշեցում մըն է այն մասին, որ նոյնիսկ երբ մեր սրտերը ծանրաբեռնուած են մեր ժողովուրդի ու ազգի համար, մենք պէտք է Եզրասի, Նեէմեայի ու ժողովուրդի նման Աստուծոյ առջեւ գանք, որպէսզի փնտռենք յաւիտենական Աստուծոյ երեսն ու բարեհաճութիւնը: Տե՛ս նաեւ Գործք 4:24, 31-ը:

## Մէկ գիրք

Կարդացէ՛ք Նեեմեայ 8:2-5-ը:

Աստուծոյ բանաւոր խօսքն այժմ գրաւոր դարձաւ: Այն Մովսէսէն փոխանցուեցաւ Յեսուիին:

Յեսուայ 1:8-ի մէջ կը կարդանք. «Այս օրէնքներու գիրքը քու բերնէդ թող չզատուի, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածէ, որպէս զի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յառաջ պիտի տանիս եւ այն ատեն յաջողութիւն պիտի գտնես»: Տէր Աստուած պահպանած է Իր Խօսքը: Չնայած Իսրայէլի որդիները շեղուեցան իրենց Աստուծմէ, սակայն շատ տարիներ անց Օրէնքի գիրքը գտան Յովսիայի օրոք:

Գ. Թագ. 22:8-13-ը կ'արձանագրէ Օրէնքի գրքի վերագտնումը: Եզրասը այն կարդալու ու յաւիտենական Աստուծոյ մասին հռչակելու եզակի ուրախութիւնն ունեցաւ:

## Մէկ կոչում

Նեեմեայ 8:6-ի մէջ կը կարդանք. «Այն ատեն Եզրաս Եհովա մեծ Աստուածը օրհնեց ու բոլոր ժողովուրդը ձեռքերնին վերցուցին ու «Ամէ՛ն, Ամէ՛ն», ըսին եւ երեսնին գետինը ձռելով՝ Տէրոջը երկրպագութիւն ըրին»: Սա Աստուծոյ իւրաքանչիւր զաւակի բարձր կոչումն է՝ յաւիտենական Աստուծոյ երկրպագելն ու ծառայելը: Չարի ցանկութիւնն է կենդանի Աստուծմէ մեր ուշադրութիւնը շեղելը: Մենք ասիկա կը տեսնենք զայրոյթի, հիասթափութեան եւ վրէժի տեսքով:

Սա այն է, ինչով սատանան փորձեց Աստուծոյ Որդիին: Գուկ. 4:6-8-ի մէջ գրուած է. «Եւ ըսաւ անոր. «Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ. վասն զի ինձի յանձնուած է եւ որո ու ուզեմ՝ կուտամ զանիկա, ուստի եթէ դուն իմ առջեւ իյնաս երկրպագութիւն ընես, ամէնքը քուկդ պիտի ըլլան»: Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր. «Գրուած է թէ՛ «Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես ու միայն զանիկա պաշտես»»: Տէր Յիսուսը Իր պատասխանի մէջ օգտագործեց երկրպագես եւ խշտես (այլ թարգմանութիւններուն մէջ՝ ծառայես) բառերը, եւ հետաքրքիր է, որ ծառայել բառը կ'ենթադրէ նաեւ երկրպագութիւնը:

## Մէկ պատգամ

Նեէմ. 8:7-8-ի մէջ կը կարդանք մարդկանց մասին, ովքեր յստակօրէն կարդացին Աստուծոյ Օրէնքը եւ բացատրութիւն տալով ընթերցուածը ըմբռնելի դարձուցին: Եզրասը կարդաց նոյն գիրքէն եւ փոխանցեց նոյն պատգամը, եւ մինչ կը կարդային այն, Աստուծոյ Հոգին Աստուծոյ մարդկանց հասկացողութիւն կուտար:

Պատգամը բեմէն քարոզուեցաւ (Նեէմ. 8:4)՝ բառ, որն Աստուածաշունչին մէջ միայն մէկ անգամ կը հանդիպինք: Ըստ էութեան այն կը վերաբերի փայտէ պատրաստուած աշտարակ յիշեցնող կառոյցի:

## Մէկ ճշմարիտ Աստուած

Նեէմ. 8:9-10-ը կը խօսի Աստուծոյ Խօսքի՝ ժողովուրդին վրայ ունեցած ազդեցութեան մասին: Սա Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի միակ ճշմարիտ Աստուծոյ միակ պատգամն էր: Ան Մովսէսի Աստուածն էր, ով Ինքն Իրեն յայտնեց, որպէս «Ես եմ»-ը (Ելից 3:13-15): Ան մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածն ու Հայրն է:

## Մէկ յոյս

Ժողովուրդին չարաստուելու կամ չսգալու կոչ կը տրուի, այլ՝ ուրախանալու այն յոյսով, որը ճշմարիտ Աստուծոյ հանդէպ ունին: Արցախի մեր այցելած որոշ վայրեր հիմա ւաւերակ դարձած են: Վերականգնուած տեսնելու մեր ցանկութիւնը նման է Նեէմեայի ցանկութեանը: Այնուամենայնիւ մեր կոչումը, որպէս Աստուծոյ ժողովուրդ չի փոխուիր: Մենք պէտք է կրենք Անոր Որդիի՝ Տէր Յիսուս Քրիստոսի պատկերը: Մենք պէտք է ապրինք աստուածահաճոյ կեանքեր, մենք պէտք է հոչակենք պատգամը, քարոզենք Աւետարանը, մենք առաքելութիւն սը ունինք, որը նոյնիսկ հրեշտակները չունին: Թող Տիրոջ ուրախութիւնը ըլլայ մեր զօրութիւնը:

Յիշենք այս համարը. «Վասն զի ինչ որ առաջուրնէ գրուեցաւ, գրուեցաւ որ սորվիք, որպէս զի համբերութիւնով ու գրքերուն մխիթարութիւնով մենք յոյս ունենանք» (Հռովմ. 15:4):

Դանիէլ Եւլյան

## Սաղմոսներու եռաբանութիւն

### Սաղմոսներ 22 – 24

**Ա**յս երեք սաղմոսները Դաւիթին կը պատկանին: Կը պատկերացնենք, որ այս սաղմոսները գրուած են իրարմէ շատ տարբեր համաճանաչներու մէջ, բայց անոնք մեզ համար քաջալերական պատգամ մը ունին:

Այս սաղմոսներէն երկուքը մեսիական են: 22-րդ սաղմոսը կը վերաբերի Տէր Յիսուսի մահուանը, իսկ 24-րդ սաղմոսը՝ Իր յաղթանակին: Որոշ մեկնաբաններ 23-րդ սաղմոսը չեն ընդունիր, որպէս մեսիական սաղմոս, բայց քանի որ այն յստակ կերպով կը պատկերէ Տէր Յիսուսին՝ որպէս մեր հոգիներու Հովիւի, ապա այն բացառելու պատճառ չունինք:

Կան որոշ մտքեր, որոնց պէտք է ուշադրութիւն դարձնենք: Առաջին՝ Մեսիական Սաղմոսներուն մէջ երբեմն դժուար է որոշել, թէ տուեալ սաղմոսի մէջ որքա՞նն է սաղմոսերգիչի անձնական փորձառութիւնը եւ որքա՞նը՝ ոչ: Սա յատկապէս կը վերաբերի 22-րդ սաղմոսին: Այնտեղ կան մտքեր, որոնք սովորական մարդու փորձառութիւնէն վեր են: Արդեօք Սուրբ Հոգի՞ն առաջնորդեց Դաւիթին, որպէսզի խօսի մեծ Դաւիթի մեծ Որդիի մասին: Արդեօք Դաւիթը փորձառե՞ց բան մը, որը Աստուծոյ Հոգին իրեն ցոյց տուաւ:

Երկրորդ՝ 23-րդ սաղմոսը կարելի է համարել հովիւի մտքեր, ով կը մտածէ մեծ Հովիւի մասին: Այս սաղմոսը գուցէ գրուած է Դաւիթի երիտասարդութեան տարիներուն:

Երրորդ՝ 24-րդ սաղմոսը գուցէ գրուած է այն ժամանակ, երբ Ուխտի տապանակը Երուսաղէմ տեղափոխուեցաւ: Դաւիթը կը մտածէ Տիրոջ վերջնական յաղթանակի ու սրբութեան մասին, որն անհրաժեշտ է Տիրոջ ներկայութեան մէջ մտնելու համար:

Երեք սաղմոսները կը կազմեն ուսուցողական եռաբանութիւն.

- 22-րդ սաղմոսը խաչի սաղմոսն է, որը կը պատկերէ Փրկչին, Բարի Հովիւին (Յովի. 10:11):



- 23-րդ սաղմոսը հովուական գաւազանի սաղմոսն է, որը կը պատկերէ մեծ Հովիւին (Եբր. 13:20):
- 24-րդ սաղմոսը թագի սաղմոսն է, որը կը պատկերէ գերիշխանին, Հովուապետին (Ա Պետ. 5:4):

Այս երեք սաղմոսներուն մէջ ունինք իրար լուրջ հակադրող տեսարաններ: 22-րդ սաղմոսը կը պատկերէ մարդու մը, ով հոգիի խոր ներութեան մէջ է եւ մեծապէս կը տառապի: 23-րդ սաղմոսը կը պատկերէ մարդու մը, որու մասին հոգ կը տարուի կեանքի իրաքանչիւր իրավիճակին մէջ: 24-րդ սաղմոսը ցոյց կուտայ, թէ ո՞վ կրնայ մտնել գերիշխանի ներկայութեան մէջ:

## Սաղմոս 22. Փրկչի սաղմոսը

Այս սաղմոսի փորձառութիւնները կարծես թէ չափազանց ծանր են Դաւիթի համար: Արդեօք ան ի՞նչ կեանքի փորձառութեան մասին կը խօսի, թէ՞ Սուրբ Հոգիէն առաջնորդուած կը գրէ ոչ թէ իր, այլ Մեսիայի մասին:

Դաւիթի տեսանկիւնէն սաղմոսը կ'արտացոլէ անցեալի մէջ Աստուծոյ կատարած գործերը: Դաւիթը կ'ընդունի իր անարժանութիւնը եւ որ Աստուած օգնած է իրեն անցեալին մէջ: Չնայած որ Դաւիթը բախուած էր իր թշնամիներու ծաղրանքին, սակայն Աստուծոյ Հոգին իրեն աւելի հեռու կը տանէր, քան իր սեփական փորձառութիւնը, որպէսզի ան մարգարէանայ խաչի տեսարանի մասին:

Այս սաղմոսին մէջ Տէր Յիսուսի խաչին վերաբերող չորս ուղղակի եւ մի քանի անուղղակի հղումներ կան: «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ինձ լքեցիր» (հմբ 1) արտայայտութիւնը տագնապի ճիշ է: Ասոնք այն բառերն են, որոնք Տէրն արտասանեց խաչի վրայէն երեք ժամուայ խաւարէն ետք: Սա միակ դէպքն է, երբ Տէր Յիսուսը Աստուծոյ չի դիմէր, որպէս Հայր: Բայց Ան կը տառապէր մեր մեղքի համար. Ան Աստուծմէ լքուեցաւ, որպէսզի մենք երբեք չբաժնուինք Իրմէ:

Կրօնական առաջնորդները կը ծաղրէին Տիրոջը Իր տառապանքի ժամանակ: Անոնք ըսին, որ եթէ Ան Իր յոյսը Տիրոջ վրայ դրած է, ուրեմն թող Տէրը փրկէ Իրեն (հմբ 8): Ան հեշտութեամբ կրնար փրկուիլ: Չերբակալութեան պահին Տէրն ըսաւ, որ կրնար էր կանչել աւելի քան

12 լէգէոն հրեշտակներ՝ Իրեն օգնելու համար: Բայց այդպէս չըրաւ: Ան չփրկեց Իր Անձը, քանի որ վճռական էր մեզ փրկելու:

«Ձեռքերս ու ոտքերս ծակեցին» (հմբ 16) արտայայտութիւնը մարգարէութիւն էր Փրկչի մահուան մեթոտի վերաբերեալ: Խաչելութեամբ մահանալը յայտնի չէր սաղմոսերգիչի օրոք, բայց Դաւիթը Աստուծոյ Հոգիէն առաջնորդուելով գրեց Փրկչի մահուան մեթոտի մասին, ով մահացաւ մեր մեղքերու պարտքը վճարելու համար:

«Իմ հանդերձներս իրենց մէջ կը բաժնեն» (հմբ 18) արտայայտութիւնը ցոյց կուտայ Տիրոջ խաչելութեան մէջ ներգրաւուածներու անտարբերութիւնը:

Տիրոջ մահուան մասին կան նաեւ անուղղակի հղումներ: Իրեն ընդդիմացան ուժեղ մարդիկ՝ Բասանի ցուլերը (հմբ 12): Ան փորձառեց ֆիզիկական տկարութիւն. Իր «ոյժը չորացաւ» (հմբ 15): Խաչելութեան ֆիզիկական հետեւանքները կը յուշեն, որ Ան կրնար հաշուել Իր բոլոր ոսկորները (հմբ 17):

21-րդ համարէն յետոյ կը խօսուի Հազարամեայ թագաւորութեան մասին: Տառապողը մեծ ժողովին մէջ պիտի առաջնորդէ Իր ժողովուրդի փառաբանութիւնը: Կուգայ օր մը, երբ Իր թագաւորութիւնը պիտի տիրէ բոլոր ազգերուն վրայ:

Ո՞րն է այս սաղմոսի նշանակութիւնը: Կը տեսնենք մարդու մը, ով շրջապատուած է իր թշնամիներով: Ան պաշտպանութիւն կը խնդրէ, բայց ոչ թէ վրէժ լուծելու համար: Մենք կը տեսնենք մարդու մը ով ամբողջովին Աստուծմէ կախուած է:

Երբ կը մտածենք այս սաղմոսի մասին, ապա կը հասկնանք, որ Դաւիթը չէր կրնար այդ խօսքերը գրել առանց Հոգիի առաջնորդութեամբ: Խաչելութեամբ մահը ոչ թէ հրեական, այլ հռովմէական պատիժի մեթոտ էր: Սաղմոսը կը նկարագրէ տառապող Մեսիային: Բայց օր մը Ան պիտի յայտնուի, որպէս յաղթական Թագաւոր: Մեր պարտականութիւնն է այսօր Իր իշխանութեանը ենթարկուիլ, որպէսզի գալիք օրին մէջ ուրախանանք Իր ներկայութեան մէջ:

Տոն Սթորմըր

## **Արագ ըլլալ լսելու մէջ եւ ծանր՝ խօսելու մէջ**

«Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներս, ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու մէջ եւ ծանր՝ խօսելու եւ ծանր՝ բարկանալու մէջ, վասն զի մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չի կատարեր» (Յակ. 1:19-20):

Այս նամակը գրուած է Տէր Յիսուսի եղբայր Յակոբոսի կողմէ: Այն կոչուած է Նոր Կտակարանի Առակաց գիրքը, եւ իսկապէս այն կը պարունակէ եւ գործնական եւ խորը երկնային իմաստութիւն: Ասիկա յստակ կ'երեւայ վերը բերուած համարին մէջ:

Առաջին բանը, որ կը նկատենք այն է, որ այս խօսքը մեկուսացուած խօսք չէ, քանի որ Յակոբոսն իր պատուէրը կը սկսի օգտագործելով «ուստի» բառը: Որպէսզի հասկնանք, թէ ինչի մասին կը խօսի Յակոբոսը, մենք պէտք է նայինք նախորդող համարին:

«Իր [Աստուած] ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը, որպէս զի մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք» (Յակ. 1:18):

«Մեզ ծնաւ», այսինքն՝ Աւետարանի միջոցով վերստին ծնիլ «ճշմարտութեան խօսքով», որպէսզի յատուկ ժողովուրդ ըլլանք՝ Տիրոջ համար առանձնացուած, ճիշտ այնպէս, ինչպէս հին օրերուն մէջ Տիրոջ համար կ'առանձնացուէր բերքի առաջին պտուղները:

Ասիկա կը նշանակէ, որ Աստուծոյ հաճելի կեանքով ապրելու եւ Իր սիրոյ ու շնորհքի ճշմարիտ վկան ըլլալու եւ մեծ արտօնութիւնը եւ մեծ պատասխանատուութիւնը ունիինք: Այդ իսկ պատճառով Յակոբոսը կը գրէ. «Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներս...»:

Եթէ չիմանայինք, թէ այդ համարին ինչ կը յաջորդէ, ապա արդեօ՞ք պիտի կարողանայինք ենթադրել թէ ինչ պիտի ըսէր Յակոբոսը: Չեմ կարծեր: Ինչո՞ւ այդ համարին կը հետեւէ լսելու մէջ արագ ըլլալու, իսկ խօսելու կամ բարկանալու մէջ ծանր ըլլալու պատուէրը: Այս հարցին պատասխանելու համար եկէ՛ք հարցնենք մէկ այլ հարց: Ինչպիսի՞ն է լսելու մէջ արագ ու խօսելու եւ բարկանալու մէջ ծանր եղող մարդու յատկութիւնները:

Տղամարդը կամ կինը, ով արագ է լսելու մէջ կը հետաքրքրուի դիմացինի մասին, որուն հետ կը խօսի: Ան կ'ուզէ հասկնալ անոնց, իմանալ անոնց սիրտը, անոնցմէ դասեր քաղել:

Այն մարդը, ով ծանր է խօսելու մէջ գիտէ, թէ միայն Սուրբ Հոգին ունի յաւիտենական կեանքի խօսքերը: Ան կ'ուզէ խօսիլ Իր խօսքերը, արտայայտել Իր իմաստութիւնը եւ ոչ թէ իր անձնականը:

Այն մարդը, ով ծանր է բարկանալու մէջ հեշտութեամբ չի վիրաւորուիր կամ զայրանար, քանի որ իր կեանքը Տիրոջը յանձնած է եւ գիտէ, որ միայն Աստուծոյ մեծ շնորհքով իր մեղքերը ներուած են: Անոր կեանքը պահուած է Քրիստոսի հետ՝ Աստուծոյ մէջ (Կող. 3:3), ուստի իր դիրքի ու համբաւի համար պայքարելու կարիք չունի:

Սէրը, իմաստութիւնը, խոնարհութիւնն ու շնորհքը կը բնութագրեն վերը նշուած քրիստոնէաներուն: Անոնք ստրված են իրենց կեանքն Աստուծոյ հետ ապրիլ: Անոնց կեանքը նման է մթութեան մէջ վառուող լոյսի՝ Տէր Յիսուսի փրկարար զօրութեան տեսանելի վկայութիւնը:

Մենք կ'ուզենք, որ Աստուծոյ արդարութիւնը գործէ մեր կեանքին, ընտանիքին, եկեղեցիին եւ անոնց մէջ, ովքեր Փրկչին դէռ չեն գտած: Բայց մարդու բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չի կատարեր: Մեր մարմնատր, եսակենտրոն, ինքնարդարացնող եւ մեղաւոր կեանքը երբեք չի առաջացներ Աստուծոյ արդարութիւնը: Սակայն, երբ կը ստրվինք Տիրոջ կոչումի համաձայն ապրիլ, Ան կը գործէ մեր մէջ եւ մեր միջոցով Իր փառքի համար:

Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներս...

Նէյլ Պուքման

---

*«Քննեցէք թէ ի՞նչ է Տէրոջը Հաճելին, ու կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ զանոնք յանդիմանեցէ՛ք»:*

*Եփես. 5:10-11*

## Եղիայի աղօթքները

### Գ Թագ. 16-18

**Ա**ղօթելը ձիրք չէ, որուն կը տիրապետէր ինչպէս հեծանի կամ մեքենայ վարելը, երբ ինքներդ ձեզ կը մտածէք ըսելով. «Հիմա որ կը տիրապետեմ այն, ալ ուրիշ բան սորվելու կարիք չունիմ»: Այն ատելի շուտ նման է գիտնականի հետազոտութեան: Դուք անընդհատ նոր բաներ կը բացայայտէք ու այդ ընելու ընթացքին նոր բաներ կը սորվիք: Գիտնականներու օգտագործած միջոցներէն մէկը միմեանց գրութիւններն ուսումնասիրելն է: Գիտնականները գիտաժողովներ կ'անցկացնեն, գիտական ամսագրերու մէջ յօդուածներ կը հրատարակեն, որպէսզի ուրիշներու փորձառութիւնէն դասեր քաղեն:

Աստուածաշունչը լի է աղօթող տղամարդկանց եւ կանանց աղօթքներով ու փորձառութիւններով: Այս փորձառութիւնները գրուած են, որպէսզի կարողանանք ուրիշներէն սորվիլ: Խնդիրն այն է, որ չենք գիտեր ո՞ր հերոսէն սկսինք: Կը կարդանք հետեւեալ հերոսներու մասին.

- Ենովքը - ով Աստուծոյ հետ քալեց եւ Աստուած իրեն առանց մահը ճաշակելու ուղիղ Երկինք տարաւ:
- Աբրահամը - ով Աստուծոյ հետ սակարկեց քաղաքի ճակատագրի վերաբերեալ:
- Մովսէսը - ով Աստուծոյ հետ դէմ առ դէմ խօսեցաւ:
- Դաւիթը - սաղմոսներու հեղինակը:
- Աննան - կին, ով աղօթքի միջոցով նուաճեց անձնական ողբերգութիւնը:
- Եղիան - ով փոխեց ազգի ընթացքը:
- Դանիէլը - որու աղօթքին մէջ ներառուած էր դիւային ուժերու հետ հոգեւոր պատերազմը:
- Նեեմիան - հիանալի ղեկավարը, ով փլատակներէն վերականգնեց քաղաքի պարիսպները:

Աստուածաշունչին մէջ նաեւ գրուած են Քրիստոսի, Մարիամի, Պողոսի, Պետրոսի եւ շատ ուրիշներու աղօթքները: Իրականութեան մէջ դժուար է գտնել մէկուն, ով իսկապէս Աստուծոյ համար մեծ գործեր ըրած է ու աղօթքի կեանք չէ ունեցած:

Ի՞նչ կրնանք սորվիլ մարդու մը աղօթքէն, որու մասին Աստուածաշունչը կը նկարագրէ որպէս կրքերու ենթակայ մարդ. «Եղիան մեզի պէս կրքերու ենթակայ մարդ մըն էր» (Յակ. 5:17): Մենք պիտի քննարկենք Եղիայի աղօթքներու երեք հիմնական փորձառութիւնները՝ պատասխանուած աղօթք, անկեղծ աղօթք եւ լստող աղօթք:

### **Պատասխանուած աղօթք**

Մեր աղօթքներուն պատասխանուելու միջոց գտնելը բոլորիս հետաքրքրող հարց մըն է: Այնուամենայնիւ աղօթքը շատ ատելի է, քան պարզապէս Աստուծոյ մեզ համար բաներ ընել ստիպելը: Շուտով պիտի յայտնաբերենք, որ աղօթքի պատասխանն ստանալը կարեւոր է, բայց ոչ այնքան, որքան կը կարծէինք: Աղօթքն իրականութեան մէջ կը փոխէ մարդկանց:

Ունինք կրքերու ենթակայ մարդ մը, ով կ'աղօթէ անձրեւի համար: Իսրայէլի մէջ երեք ու կէս տարի անձրեւ չէր եկած: Մինչ Եղիան կ'աղօթէր, ամպերը կը ձեւաւորուէին ու յորդառատ անձրեւը կը սկսի: Արդեօք սա՞ է այն ամէնը ինչ կրնանք սորվիլ: Աղօթքի այս տպաւորիչ պատասխանը հասկնալու համար պէտք է ատելի խորը քափանցենք այս աղօթքի շուրջ եղած իրադարձութիւններուն մէջ: Եղիան կ'ասլեր այն ժամանակահատուածի մէջ, երբ Իսրայէլը կը գտնուէր Աքաաբ թագաւորի իշխանութեան տակ, մարդ, որը ամբարիշտ ու չար էր: Աքաաբն ամուսնացաւ հարեան հեթանոս ազգի արքայադստեր հետ: Անոր անունը Յեզաբէլ էր, եւ որպէս թագուհի՝ ան Իսրայէլ բերեց իր հայրենիքի կոռքերը: Անոնց մէջ գլխաւորը Բահաղն էր: Ան եղանակի ու բերրիութեան աստուածն էր: Բահաղի երկրպագութեան մէջ կը մտնէր խնջոյքները, գոհերը, արտասովոր պարերն ու տաճարային մարմնավաճառները: Բահաղի երկրպագութեան հեշտասիրութիւնէն գրաւուած՝ իսրայէլացիները լքեցին իրենց արդար Եհովային: Սա հանգեցուց երաշտի:

(Շարունակելի)

Ռէքս Տիրլա

## Վասն զի Իմ լուծս քաղցր է եւ Իմ բեռս թեթեւ

**Շ**նորհակալութիւն կը յայտնենք մեր բոլոր ընթերցողներուն, աջակիցներուն եւ հովանաւորներուն՝ իրենց աղօթքներու եւ քաջալերանքի համար: ACM-ը իր ծառայութիւնը կը շարունակէ եւ օրհնուած է զհետնալով, որ իր բոլոր ջանքերն ապարդիւն չեն:

Աստուածաշունչին մէջ աղքատներու մասին անելի քան 2000 յիշատակում կայ: Այս թիւը մեզի մտածելու տեղ կուտայ: Աստուծոյ սրտին որքա՛ն մօտ է այս հարցը, որ Իր Խօսքին մէջ տիեզերքի Արարիչը բազմաթիւ անգամներ կը խրախուսէ ու կը հրահանգէ մեզ հոգ տանել աղքատներուն, որբերուն, այրիներուն եւ տառապեալներուն: Առակաց 14:31-ի մէջ գրուած է. «Աղքատին զրկանք ընողը անոր Ստեղծիչը կ'անարգէ, բայց տնանկիւն ողորմութիւն ընողը զանհիկա կը պատուէ»:

**Ստեփանակերտ.** մեր հովանաւորած շատ ընտանիքներ վերադարձան իրենց տուները վերակառուցելու եւ բնականոն կեանքին դառնալու: Թոմիկ Եղբայրը, ով կ'ապրի Ստեփանակերտի մէջ միացաւ մեր խումբին, որպէսզի խնամակալէ մեր հոգատարութեան տակ գտնուող ընտանիքներուն, սակայն ընելիք շատ քան կայ, քանի որ մարդիկ խաղաղութիւն եւ անվտանգութիւն կը փնտռեն: Թոմիկը շատերուն կը քաջալերէ Աստուծոյ Խօսքով:

**Կիւմրի.** Աշոտն ու Յասմիկը երկու հանդիպումներ վարեցին՝ մէկը «Zoom»-ի միջոցով եւ միւսը մեր անտարանչատանը: Անոնք նաեւ երիտասարդաց եւ մանուկներու խմբակներ կը վարեն: Կը խնդրենք աղօթել այս ծառայութիւններու համար: Անոնք շատ մարդկանց կ'այցելեն՝ հոգ տանելով մեր ընտանիքներուն, հիւանդներուն եւ աղքատներուն: Շուտով Հայաստան կը հասնի Աւստրալիայէն ուղարկուած բեռնարկը, որը պիտի տրամադրուի կարիքատր ընտանիքներուն: Աստուծոյ կամքով կը ծրագրենք այս տարի Աւստրալիայէն երեք բեռնարկներ ուղարկել, իսկ չորրորդը՝ Լու Անճլւէն: Վերջինս կազմակերպուած է ACM-ի մեր ներկայացուցիչ՝ հովիւ Բաֆֆի Չափարեանի կողմէ, ARDA- ի եւ ACFOC-ի հետ համատեղ:

**Վանաձոր.** այս տարածքին մեջ բնակող մեր ընտանիքներու մեծ մասը կ'ապրին մետաղական տոմիկներու մեջ: Չմեռը դաժան էր եւ ձիւնը անդադար կը տեղար: Աշոտն ու Յասմիկը պարբերաբար կ'այցելէն ընտանիքներուն՝ անոնց ամէն ամսուայ օգնութիւնը փոխանցելու եւ Քրիստոսով քաջալերելու համար: Անոնցմէ շատերը հիւանդութիւններ ունէին, որոնց համար ստիպուած էինք Երեւան ուղարկել բուժման համար: Հանդիպումները կ'անցնենք տոմիկներուն մէջ, ինչը լուսագոյն տեղը չէ. բայց հանդիպելու այլ վայր չկայ: CEF-էն Աստղիկը պարբերաբար կ'օգնէ մեզ՝ վարելով մանկական խմբակը:

**Երեւան.** Մարտունի, Անժելայի եւ Անիի ուսերուն վրայ դրուած են վարչարարութեան եւ հաշուապահական հաշուառման ամբողջ բեռը: Անոնք պատասխանատու են փաստաթուղթերը աւարտին հասցնելու: Մենք օրհնուած ենք իրենց մեզ հետ ունենալու համար: Վերջերս նշեցինք Մարտունի եւ Անժելայի ACM-ին եւ Տէրոջը ծառայելու 10 ամեակը: Որքան հրաշայի է Աստուած: Մարտունը կը վերահսկէ մեր բոլոր աշխատանքները՝ ներառեալ քարոզչութիւնը, ուսուցումը, այցելութիւններն ու խորհրդատուութիւնը, իսկ այժմ նաեւ փախստականներուն այցելութիւնը: Կը խնդրենք աղօթել, որ Տէրը զօրացնէ իրենց ծառայութեան մէջ: Անժելան նոյնպէս կ'օգնէ վարչարարութեան մէջ: Ան շատ նուիրուած անձնատրութիւն է, եւ օրհնուած ենք իրեն ունենալու մեզ հետ: Տնային խնամքը մեր կարեւոր ծառայութիւններէն մէկն է. Հայկուհին հոյակապ աշխատանք կը կատարէ այս ուղղութեամբ: Ան շուտով պիտի մկրտուի եւ մեծ փափագ ունի Տէրոջ հետ ուխտ կնքելու:

Կը խնդրենք աղօթել ACM-ի համար: Պատերազմէն ետք մեր աշխատանքը կրկնապատկուեցաւ: Սուրիայի, Լիբանանի, Արցախի եւ Հայաստանի շատ ընտանիքներ աջակցութեան կարիք ունին այսօր:

Մենք նաեւ թողարկեցինք նոր տեսանիւթ մը, որը ցոյց կուտայ մեր հոգատարութեան տակ գտնուող արցախցի ընտանիքներէն մի քանիսի մասին: Այն կարող էք դիտել մեր կայքէջէն՝ այցելելով [www.acmaust.org](http://www.acmaust.org): Կարող էք նաեւ հովանաւորել ընտանիք մը կամ նուիրատուութիւն կատարել այս գործին: